ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

1946-1948ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՍԴ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

20-րդ դարի 20-ական թվականներին՝ Առաջին համաշխարհային պատերազմից և Մեծ եղեռնից հետո, հարյուր հազարավոր աստանդական ու տարագիր հայեր ապաստանեցին Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի տարբեր երկրներում՝ ձևավորելով ստվարածավալ հայկական_գաղթօջախները կամ, ինչպես ընդունված է ասել, սփյուռքը:

Հենց սկզբից էլ սփյուռքահայերի դիրքորոշումը Խորհրդային Հայաստանի նկատմամբ միատեսակ չէր, սակայն այսպես թե այնպես տարրագիր հայերի հայացքն ուղղված էր դեպի հայրենիք, նրանցից շատերն ուզում էին վերահաստատվել հայրենի հողի վրա: Այս հարցով զբաղվում էին անգամ Ազգերի ընկերակցությունը, հայասիրական միջազգային կազմակերպությունները:

ՍԴ Հնչակյան կուսակցությունը սփյուռքում գործող կուսակցություններից առաջինն էր, որ հենց սկզբից որդեգրեց հայրենիքի հետ համագործակցելու դիրքորոշում:

Կուսակցության Մարսելի մասնաճյուղը 1926թ. հունվարի 30- ին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ[1], որով ֆրանսահայերին կոչ էր անում զգուշանալ դաշնակցականների հակախորհրդային քարոզչությունից, որը, իրականում, ավելի շուտ ուղղված էր հայերի միակ հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի դեմ:

Հայտարարության շարժառիթը հունվարի 24-ին Մարսելում դաշնակցական կուսակցության կազմակերպած հրապարակային ժողովում Փարիզից հրավիրված Ավ.Սահարոնյանի ելույթն էր: Վերջինս ամեն կերպ աշխատում էր չեզոքացնել ՀՕԿ-ի և Կարմիր խաչի անօրինակ ու խանդավառ գործունեության շնորհիվ հայրենիքի հանդեպ Ֆրանսիայում հանգրվանած գաղթականության մեջ առաջացած համակրանքի այն բուռն ալիքը, որ օրեցօր ծավալվում էր և համակիրների նորանոր շրջաններ նվաճում:

Սահարոնյանի ելույթից մեջ բերելով «Հայրենիքի ժողովուրդը պէտք չունի օգնութեան, գաղութներուն պէտք է ուժ տանք» կարգախոսը, հնչակների Մարսելի մասնաճյուղի հայտարարությունը զգոնության կոչ է ուղղում հայությանը. «Հայրենիք մ'ունինք մենք: Ճանչնալ այս իրողութիւնը, ժխտել այս ճշմարտութիւնը, որուն առջեւ այնքան երկյիւղածութեամբ կը մօտենան

[1] ՀԱԱ, ֆ.1, ց. 6, գ. 26բ, թ. 13:

Նանսէնները, Ռըլիֆի եւ Լորտ Մէյրոս Ֆրնտի ներկայացուցիչներ, կը նշանակէ ոճիրի մեծագոյնը գործել Հայ ժողովրդին նուիրական զգացումներուն խորանին առջեւ:

Մեր Հայրենիքը կայ եւ կը վերաշինուի ու կը վերաստեղծուի իր մշակութային օրկաններով, համալսարանով եւ շինարարական գործերով, որոնք այնքան գովեստով կը դրուատուին օտարականներու կողմէ ի պատիւ հայ աննկուն կամքին եւ անոր ստեղծագործող ուժին»:

Ընդգծելով, որ ՀՕԿ-ը գաղութներում ամենամեծ կազմակերպությունն է, որ կոչված է գաղութը կապելու Մայր Հայրենիքին, հայտարարությունը կոչ է անում համախմբվել նրա շուրջը, հայացքն ուղղել դեպի Հայաստան և կատարել սրբազան պարտքը հայրենիքի հանդեպ:

1935 թ. ապրիլի 4-ի համարում «Հիմնական դարմանը» խմբագրական հոդվածում[2] «Հնչակ» անդրադառնում է աշխարհն ընդգրկած տնտեսական ճգնաժամին և ընդգծում, որ մի շարք երկրներում ապաստանած հայ գաղթականները, տնտեսական ծանր վիճակից զատ, ունեն մի այլ՝ ավելի զորեղ մտահոգություն. իրենց օթևան տված երկրից դուրս քշվելու, արտաքսվելու, կրկին գաղթի ճանապարհը բռնելու վտանգը:

Հայ մամուլը և ազգային շրջանակները որպես «դարման» առաջարկում են հայերին «զանգվածային քաղաքացիություն» ընդունել, որը, ըստ հոդվածի, փրկության ելք չէ, քանի որ ճգնաժամը քաղաքացի-ոչ քաղաքացի չի ճանաչում, մյուս կողմից էլ սա ուծացման գնալու և հայրենիքից մեկընդմիշտ օտարանալու վտանգավոր ուղի է:

Թերթն առաջ է քաշում «Զանգվածային գաղթ դէպի Խորհրդային Հայաստան» կարգախոսը՝ միաժամանակ մատնանշելով, որ ներգաղթը կապված է մի շարք դժվարությունների, նյութական զոհողությունների հետ, որոնք, սակայն, հաղթահարելի կլինեն Խորհրդային Հայաստանի աջակցությամբ, ինչպես նաև արտասահմանի ազգային հաստատությունների, մասնավորապես ՀԲԸՄ-ի դրամական օժանդակությամբ:

«Դէպի Հայաստան զանգուածային գաղթ մը ոչ միայն մահացումէ պիտի փրկէ հայ գաղթականութեան մեծագոյն մասը, այլ եւ մեծապէս պիտի նպաստէ Հայաստանի վերելքին», - այս եզրակացությանն է հանգում խմբագրականը՝«հիմնական դարման» համարելով միայն զանգվածային ներգաղթը:

Հայերի զանգվածային ներգաղթի հարցը, սակայն, օրակարգում դրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որին նպաստեցին մի շարք գործոններ, այն է՝ հաղթանակած Խորհրդային Միության վարկանիշի աճը արտասահմանում, այդ երկրների հայերի դրամական օգնությունը Կարմիր

[2] «Հնչակ», 1935, ապրիլ, էջ 1-2:

բանակին, ֆաշիզմի դեմ կազմակերպված Դիմադրության շարժմանը անդամագրվելը և այլն:

Պատերազմի հաղթական ավարտից հետո թե՛ հայրենիքի, թե՛ սփյուռքի հայերին ոգևորողը շատ ավելի հզոր մի գործոն էր, որը առնչվում էր Թուրքիային անցած հայկական տարածքների գոնե մի մասը ետ ստանալու և Խորհրդային Հայաստանին միակցելու հեռանկարին, քանի որ Հայաստանի կառավարությունը այս հարցը 1945թ. ընթացքում մի քանի անգամ բարձրացրել էր ԽՍՀՄ կառավարության առաջ: Վերջինս փորձել էր այն քննարկել և՛ թուրքական կառավարության հետ, և՛ միջազգային խորհրդաժողովներում, սակայն այդպես էլ արդյունքի չէր հասել[3]:

Այս հարցի քննարկման ընթացքում էլ ԽՍՀՄ Ժողկոմխորհը 1945թ. նոյեմբերի 21-ին ընդունել էր որոշում սփյուռքահայերի ներգաղթը կազմակերպելու մասին[4], որը ջերմ արձագանք էր գտել սփյուռքահայ բոլոր քաղաքական կուսակցությունների կողմից, այդ թվում նաև՝ դաշնակցության:

Բայց տարածքների հարցի ծախողումը, ինչպես նաև հայաշատ գաղթօջախներում կազմակերպված ներգաղթին աջակցող տեղական կոմիտեների կազմակերպումը, որոնց աշխատանքներին դաշնակցականների մասնակցությունը խորհրդային կառավարությունը ցանկալի չէր համարել, փոխեց դաշնակցության դիրքորոշումը, քանի որ վերջինիս համար առաջնահերթը կար և մնում էր պահանջատիրության հարցը:

Դաշնակցությունը դարձյալ անցավ հակախորհրդային քարոզչության, որը մեխանիկորեն ստացավ նաև հակահայրենադարձի ուղղվածություն:

Հնչակյան կուսակցությունը հայրենադարձության ջատագովն էր և իր մամուլում 1946 – 1948թ.թ. ընթացքում տպագրեց բազմաթիվ հոդվածներ, որոնցով կոչ էր անում սփյուռքի հայերին հայացքն ուղղել միայն դեպի Հայաստան, ամեն ինչով աջակցել հայրենադարձությանը և հեռու մնալ դաշնակցական քարոզներից:

Այսպես, «Ներգաղթ դեպի Հայաստան» խմբագրական հոդվածում[5] Նյու- Յորքում տպագրվող «Երիտասարդ Հայաստան» թերթը, փաստելով, որ ներգաղթն այլևս իրականություն է դարձել արտասահմանում ապրող բոլոր հայերի համար, որ այն այլևս խմբային կամ հայրենակցական մակարդակի բնույթ չունի, ընդգծում է այն կարևոր դերը, որ ունենալու է նա հազարավոր պանդուխտ, անհայրենիք հայերի համար:

---

[3] Տե՛ս Ա. Վիրաբյան, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Եր., 2001, էջ 63-81, Հ. Սելիքսեթյան, Հայրենիք - սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985, էջ 171-177:

[4] ՀԱԱ, ֆ.326, ց.1, գ.74, թ.1:

[5] «Երիտասարդ Հայաստան», 22 փետրվարի, 1946:

Ներկայացնելով Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհին կից Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի անդրանիկ նիստի՝ արտասահմանից հայրենիք վերադառնալու խնդրի շուրջ կատարված քննարկման եզրակացությունը՝ համաձայն որի «...արտասահմանում գործող հայկական բոլոր առաջադիմական եւ բարեգործական կազմակերպութիւնների համար այսօր չի կարող լինել աւելի կարեւոր եւ պատուաւոր խնդիր, քան արտասահմանում ապրող հայերի հայրենիք վերադառնալու կազմակերպման գործն է», թերթը նշում է, որ կոմիտեի կոչն ուղղված է սփյուռքի բոլոր առաջադիմական կազմակերպություններին, և վերջինիներիս սուրբ պարտքն է օգնել և՛ հայրենիք վերադարձողներին, և՛ հայրենիքին:

Ամերիկահայերը քաջ գիտակցում են, որ ներգաղթի առաջնությունը պիտի տրվի ավելի չքավոր, ավելի անապահով վիճակում գտնվող գաղթօջախների՝ Հունաստանի, Սիրիայի, Ֆրանսիայի և նման երկրների հայությանը, սակայն, անշուշտ, հերթը կհասնի նաև ամերիկահայությանը, որը համեմատաբար բարեկեցիկ վիճակում է:

«Ներգաղթը համահայկական, համազգային բնոյթ կրող խոշորագոյն գործն է, զոր կը ներկայանայ արտասահմանի Հայոց», - գրում է թերթն ու ավելացնում, որ ամերիկահայերը «բացառիկ ընելիքներու պարտադրման ներքեւ են»:

«Երիտասարդ Հայաստան» թերթի մի այլ համարում[6] տպագրված «Անժամանակ ածապարանքը մեզ կը վնասէ» հոդվածը տեղեկացնում է, որ ամերիկահայության Ազգային Խորհրդի կենտրոնական մարմինը Նյու-Յորքում արդեն կազմակերպել է ներգաղթի հատուկ հանձնախումբ, որը շուտով ազգային խորհրդի մասնաճյուղերի միջոցով յուրաքանչյուր հայի կհասցնի հատուկ հարցարան, որը լրացվելուց հետո «անաղմուկ մեթոդով» կհասցեագրվի Նյու- Յորքի կենտրոնական հանձնախմբին: Հիշեցնելով, որ ներգաղթի առաջին քարավանները պիտի կազմվեն Հունաստանի, Սիրիայի, Ֆրանսիայի գաղթականներից, թերթը ամերիկահայերին հորդորում է զինվել համբերությամբ և սպասել իրենց հերթին, քանի որ Խորհրդային Հայաստանի հրավերից անմասն չի մնալու նաև ամերիկահայությունը:

«Ամերիկահայութիւնը բացառութիւն չը կազմեց, նա էլ հրաւիրուած է Տուն: Նա էլ կը գնա Մայր Հայաստանի մէջ մնայուն օճախ մը կազմել եւ յաւերժացնել իր Հայ մնալու մարդկային բնական ցանկութիւնը», - գրում է թերթն ու ավելացնում, որ որոշ ամերիկահայեր, ժամ առաջ հայրենիք մեկնելու ցանկությամբ տարված, սկսել են դիմել զանազան հաստատությունների՝ իմանալու այն հնարավոր ուղիները, որոնցով հնարավոր կլիներ սեփական միջոցներով օր առաջ մեկնել հայրենիք: Մինչդեռ ներգաղթը հաջող կազմակեր-

---

[6] «Երիտասարդ Հայաստան», 29 մարտի, 1946:

պելու համար անհրաժեշտ է հայրենիքի և գաղթօջախների հայության երկուստեք փոխկապակցված համագործակցությունը, որի արդյունքում կլուծվեն և՛ անցագրերի, և՛ տեղափոխության, և՛ հայրենիքում ընդունվելու ու տեղավորելու բավական ծանր ու լուրջ խնդիրները:

«Բոլոր անոնք, որոնք որ անժամանակ աճապարանքի կենթարկեն ինքզինքնին, հսկայական վնասներու կրնան ենթարկուիլ, եւ դա պատճառ կը դառնայ անուշ յոյսերու, սրտավառ ցանկութիւններու բեկման... Արդ, ցուցակագրուէ եւ հանդարտութեամբ սպասէ կարգիդ, առանց առօրեայ աշխատանքէդ բաժնուելու», - հորդորում է թերթն իր ընթերցողներին:

Նույն թերթը հունիսի 18-ի համարում տպագրել է Ամերիկայի հայերի ներգաղթի օգնության հանձնախմբի վարիչ-քարտուղար,-դոկտոր Մ.Բնակունու «Լուսաբանութիւններ ներգաղթի մասին» վերնագրով հոդվածը[7], ուր հեղինակը հանգամանորեն պատասխանում է հանձնախմբի հասցեով ստացված բազմաթիվ և բազմաբնույթ հարցերից ընտրված առավել կարևոր և լուսաբանման կարիք զգացող 18 հարցերի:

Ներգաղթել ցանկացող հայերին հետաքրքրել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայրենիքում ապրող միջին աշխատավորի եկամտի, կրթության և առողջապահության ուղղությամբ կատարվող ծախսերի չափերը, կանանց աշխատանքի պարտադիր լինելը, անաշխատունակ անձանց ապահովության խնդիրը, մարդկանց կուսակցական լինելը, նախկին երկրի քաղաքացիությունը պահպանելու հնարավորությունը, շարժական գույքի տեղափոխումը, տեղում փոքրիկ արտադրական արտելներ կազմակերպելը և այլն:

Հետաքրքիր է գույքի տեղափոխման հնարավորության խնդրին տրված մեկնաբանությունը: «Ասիկա կարեւոր հարցում մըն է: Ձեզ հետ կրնաք տանիլ ոչ միայն ձեր բոլոր կարեւոր եւ արժէքաւոր կարասիները, այլ եւ առանձին այնպիսի առարկաներ եւ անօթներ, որոնք ձեր հանգստութեան համար կարեւոր կնկատէք՝ ինչպէս ելեքտրական սառնարան, վառարան, օճախ, արդուկ, մաքրող, լուացող, եփող եւայլն, եւայլն: Որովհետեւ նախ ամերիկեան չափանիշով ձեր հանգիստը ապահով կ'ըլլաք: Երկրորդ, Խ.Հայաստանի մէջ ելեքտրականութիւնը շատ աժան ըլլալով ամենայետին գիւղերն անգամ կերակուրը ելեքտրականութիւնով կ'եփեն: Երրորդ, Հայկական Կառավարութիւնը ներգաղթողներու բոլոր գոյքը մաքսէ զերծ հռչակած է: Չորրորդ, փոխադրութեան ծախսը շատ քիչ է: Հինգերորդ, այս կերպով երկրին բարելաւութեան սատարած կ'ըլլաք որոշ չափով»:

«Երիտասարդ Հայաստանի» 1948թ. ապրիլի 6-ի խմբագրականը[8] («Հայաստանէն փախչողները») սուր քննադատության է ենթարկում դաշնակ-

---

[7] «Երիտասարդ Հայաստան», 18 հունիսի, 1946:
[8] «Երիտասարդ Հայաստան», 6 ապրիլի, 1948:

ցական մամուլում անընդմեջ տպագրվող հոդվածները, որոնք հեղեղված են հայրենադարձ հայերի՝ Հայաստանը լքելու, երկրից փախչելու փորձերին:

Քննադատելով այս հրապարակումները՝ հնչակյան կուսակցության օրգանը բերում է այլ փաստեր, կատարում այլ եզրահանգումներ:

«Երկու տարուայ ընթացքին, - ասվում է խմբագրական հոդվածում, - արտասահմանէն Հայաստան մեկներ են 93.000 գաղթահայեր: Հայ մամուլը տեղ տուաւ այս մեկնողներու Հայաստանէն գրած բազմահազարներով նամակներուն, որոնք բարձրօրէն կը յայտնեն իրենց գոհունակութիւնը՝ թելադրելով իրենց ազգական բարեկամներուն, որ միանան ներգաղթի կարաւաններուն եւ օր առաջ ժամանեն Հայաստան»:

Դաշնակցական մամուլում այս նամակները որակվել են իբրև «չեկայի» պարտադրանք, սակայն, ինչպես նշում է թերթը, այդ նամակների հեղինակները, եթե չուզենային գրել, կխուսափեին դրանից՝ պատճառաբանելով, թե չուներն մեկը, որին նամակ գրեն: Ավելին, զարմանալի կլիներ, որ 93.000 հայրենադարձվածների մեջ չգտնվեին նաև դժգոհներ, իսկ շատ ավելի զարմանալի, եթե այդ դժգոհների մեջ էլ չլինեին իրենց ամբողջ կյանքում որևէ օգտակար աշխատանքով չզբաղված «գինեմոլ, խումարճի եւ խահվեճի» մարդիկ, որոնք, բնականաբար, Հայաստանից չէ, որ փախչում են, այլ՝ աշխատանքից:

«Ամէն մարդ գիտէ, որ ռեւիզէ գաղթականի համար նոր միջավայրը, թէկուզ արքայութեան մէջ իսկ ըլլայ, զգալի պիտի ընէ անհրաժեշտ կարիքներու շարք մը, որոնք ժամանակի ընթացքին կը լեցուին աշխատանքով միայն: Մեղկերն ու ծոյլերը եթէ չեն համակերպիր այս շատ պարզ ճշմարտութեան, մեղավո՞ր է Հայաստանի կառավարութիւնը, որը պատմութեան մէջ չարձանագրուած հայրենասիրական բարձր ոգիով հայրենադարձի մեծագոյն փրօպլէմը կ'իրագործէ, ապշահար ընելով աշխարհի հզօր ազգերն իսկ»:

Թերթը գրում է նաև, որ հազարավոր գաղթահայեր հայրենիք են մտել մի փոքրիկ կապոցով միայն, և նրանց բնակարանով, տնային իրերով, հագուստով, սննդով և աշխատանքով ապահովելը միլիոնավոր դոլարների ծախս է պահանջում, ուստի մի՞թե ճիշտ ու արդար են այն ներգաղթողները, որոնք այս ամենը արդեն պատրաստի վիճակում են ակնկալում:

Վերջապես, նույն երկրում անգամ քաղաքից քաղաք տեղափոխվածի համար նոր միջավայրին հարմարվելն ամիսներ է տևում, ուր մնաց՝ երկրից երկիր տեղափոխվածին:

Սակայն, ի հեճուկս հայրենադարձությունը պառակտելու փորձերի անողների, արտասահմանի բոլոր երկրներից բազմահազար հայեր շարունակում են դիմել ներգաղթը կազմակերպող գրասենյակներին, համբերությամբ սպասում են մեկնելու իրենց հերթին:

«Դաշնակցութիւնը, որպէս Հայ կազմակերպութիւն, պարտի վազ գալ Հայերը Հայաստանէն հեռացնելու գաղափարապաշտութեանէն: Նոյնիսկ ծանր

դժվարութիւններ դիմագրաւող Հայը միմիայն Հայաստանի մէջ է, որ կը մնայ Հայ: Ամէն, ով որ գիտակցաբար կը դաւադրէ այս ճշմարտութեան, մարդկութեան եւ պատմութեան սեւ դատակնիքին կ'արժնանայ:

Փախստականներու անունով շրջագայութեան հանուած կեղծ ու պատիր պատմութիւնները արժէք ու նշանակութիւն չէն ունեցած, չունին եւ պիտի չունենան, գաղութահայութիւնը պիտի գնայ եւ պիտի հաստատվի Հայաստանի մեջ», - ամփոփում է ասելիքը խմբագրականը՝ մեկ անգամ ևս ընդգծելով, որ եկել է ժամը իրականացնելու համայն հայության դարավոր երագ Ազգահավաքը:

Վերոհիշյալ հրապարակումները, անշուշտ, միակողմանի են և իրատեսորեն չեն ներկայացնում ներգաղթի համապարփակ պատկերը, նրա հետ կապված շատ ու շատ խրթին հարցեր, թեև հնչակյան կուսակցությունը քաջատեղյակ էր այդ ամենի մասին:

Սակայն կուսակցությունը, լավ զգալով սփյուռքահայությանը սպառնացող ուծացման վտանգը, այն համարելով հային սպառնացող ամենամեծ չարիքը, հայրենադարձության գործընթացը մեկնաբանել է առանց իրերի դրության մեջ խորամուխ լինելու: